

Հայկ Յովհաննիսյան  
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, 2-րդ կուրս  
Գիտ. ղեկ.՝ ք. գ. դ., պրոֆ. Ա. Մակարյան  
Էլ. փոստ՝ haykhovhannisyanyan20@rambler.ru

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆՊՅԱՆԻ «ԿՐԻՏԻԿԱ ԱՍՈՍ ԵՎ ՎԱՐՂԻՔԵՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆԸ

*Կրիտիկան... մի չափ է, մի նշանացույց է, մի այնպիսի կշիռ, որով  
իսկ և իսկ հասկացվում է որևիցե ազգի լուսավորության աստիճանը,  
ուրեմն յուրաքանչյուր ազգի կրիտիկա հայտնում է մեզ նույն ազգի  
տեսության և հայացքների պարզությունը կամ պղտորությունը:*  
Մ. Նալբանդյան

Հայ գրականության դարավոր պատմության հանճարահանդեսի մեջ զարմանալիորեն քիչ են գրաքննադատները: Ե՛հիշտ է, հայ քննադատական մտքի պատմության ակունքները ձգվում են մինչև ոսկեդարյան մատենագրություն, որտեղ Պատմահայրը քննադատական հայացքով է մոտենում հայ հին բանահյուսությանը, փորձում ճշմարտությունը զանազանել ստապատիր հորինվածքից և նույնիսկ պարսից առասպելներն է ենթարկում ուսումնասիրության և քննադատության, սակայն երկար ժամանակ չէին ստեղծվում աշխատություններ, որոնք ունենային զուտ քննադատական ուղղվածություն: Չէր սխալվում Հրանտ Մաթևոսյանը՝ ասելով, որ նույնիսկ «Սասունցի Դավիթն» ու «Մոկաց Միրզան» ստեղծվելիս քննադատություն կար. ասացողին օջախի մոտ շրջապատած կանանց, երեխաների, հոգնած մշակների վերաբերմունքն ու ներկայությունն էլ հենց ժամանակի քննադատությունն էին: Այո՛, այդպիսի ազնիվ ճանապարհ է անցել հայ քննադատությունը, սխալված չենք լինի, եթե ասենք, որ քննադատությունն այնքան հին է, որքան գրական ստեղծագործությունն ինքը: Ինչ վերաբերում է տեսական քննադատությանը, պետք է ասել, որ այստեղ անուրանալի է Մ. Նալբանդյանի ներդրումը:

Հայ քննադատական մտքի այդ մեծ երախտավորը՝ Մ. Նալբանդյանը, ի թիվս այլ ստեղծագործությունների, ծավալուն աշխատությամբ անդրադարձավ նաև Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպին՝ ցույց տալով նրանում տեղ գտած մի շարք հակասությունները, թերությունները և, իհարկե, գնահատելով դրա արժանիքները: Նա իր «Կրիտիկա. Սոս և Վարդիթեր» աշխատության սկզբում վերլուծական հզոր մտքով դիտարկեց 19-րդ դարի հայ գրականությունը, արժևորեց Խ. Աբովյանին, Դ. Ալիշանին, Գ. Տեր-Հովհաննիսյանին, խոսեց «Ազապի» վեպի մասին՝ դրանով հետաքրքրություն առաջացնելով բանասիրության մեջ, ինչի շնորհիվ էլ պարզվեց հիշյալ վեպի հեղինակի անունը (Հովսեփ Վարդանյան):

Պահպանելով իսկական քննադատին բնորոշ կեցվածք՝ Նալբանդյանն իր աշխատությունը (նվիրված «սիրական եղբայր» Խաչիկ Օտյանին՝ Երվանդ Օտյանի հորը), որն իրավամբ անվանվում է «հայ քննադատական մտքի չգերազանցված փաստաթուղթ», սկսում է վեպի պատշաճ գնահատումից և հետո միանգամից նկատում վեպի հերոսների խոցելի կողմերը: Հատկանշական է, որ Նալբանդյանին հետաքրքրում են նաև վեպի երկրորդական հերոսները, ովքեր պետք է անհրաժեշտ միջավայր ստեղծեին գլխավոր հերոսների համար, սակայն երկրորդական հերոսների անլիարժեքությունն ու միակողմանիությունը փոքր-ինչ խանգարեցին դրան: Ի դեպ, այն ժամանակ դեռևս չկար «գրական կերպար» եզրույթը, Նալբանդյանը նրանց անվանել է «ներգործողք»: Խոսելով Վարդիթերի եղբայր Արշավիրի մասին՝

Նախաճանաչման շատ արդարացիորեն նկատում է, որ վեպի սկզբում ներկայացվում է, որ նա Սոսի և Վարդիթերի հարաբերություններին կողմ արտահայտվող մի անձնավորություն է, սակայն հետո անհասկանալի հանգամանքներում նա հրաժարվում է Գարեգինին տված իր խոստումից՝ դեմ կանգնելով քրոջ և Սոսի ամուսնությանը, և չեն նշվում դրա պատճառները: Սա, անշուշտ, վեպի հեղինակի անփորձության և անուշադրության արդյունքն է (որպես հակադրություն նշենք, որ նմանատիպ կոնֆլիկտ պարունակող «Անուշ» պոեմում հանձարեղ թունամայանը չէր կարող նման վրիպում թույլ տալ): Մյուս աղաղկող թերությունն այն է, որ գեղարվեստական երկ ստեղծելիս Պռոշյանը կորցնում է իրականության զգացումը, շեղվում բնականությունից, Ե. Չարենցը կասեր «երկաթեն կոնտրոլից»՝ դրանով սեպ խրելով իրական կյանքի և գրականության միջև այն դեպքում, երբ գրականությունը պետք է մի անխարդախ հայելի լիներ, որի մեջ արտացոլված է իրականությունը: Հիշյալ թերության հետևանքն այն է լինում, որ վեպի հիմնական թեման՝ Սոսի և Վարդիթերի սիրո ծնունդը, ներկայացվում է ոչ թե իրական կյանքում, այլ ընդամենը Սոսի տեսած երազում: Սա, ինչ խոսք, զգալիորեն թուլացնում է վեպի գեղարվեստական որակը. չէ՞ որ հեղինակին հնարավորություն էր տրված ստեղծելու գեղագիտական նշանակություն ունեցող մի գողտրիկ պատկեր, որտեղ էլ պետք է երևան համեր այդ կուսական սիրո ծնունդը, բայց հեղինակը ընտրում է հեշտ տարբերակը՝ միանգամից պատմում է այդ սիրո ծնունդը՝ ընթերցողին հնարավորություն չտալով տեսնելու այն, այլ միայն լսելու դրա մասին՝ դրանով ծանր հարված հասցնելով վեպի գեղարվեստականությանը: Նախաճանաչման նման հզոր քննադատի աչքից չէր կարող վրիպել այս փաստը, ինչն էլ ստիպում է նրան անդրադառնալ այդ հարցին:

Քննելով վեպի թերությունները՝ Նախաճանաչմանը հայացքն ուղղում է դեպի ամենաաղաղակող, ամենամարտամբանական փաստը՝ գլխավոր հերոսների տարիքը: «Այն միջոցին, երբ Վարդիթերը վարում էր մի էրված սիրուհու պաշտոն,- գրում է Նախաճանաչմանը,- և որի սերը արդեն երկու տարի է, որ մաշում է նորա սիրտը և հոգին, դեռ նոր էր փոխել ատամները, դեռ նոր էր մտել տասնումի տարեկանության մեջ»<sup>1</sup>: Իսկապես, ինչպե՞ս կարող է պատահել, որ Արարատյան գավառում բնակվող տասնմեկ տարեկան աղջիկը անձնագոհ սիրով սիրահարվի, իր սիրելիին ինչ-որ իրեր փոխանցելու համար դիմի բավական բարձր գիտակցություն ունեցող անձնավորությանը հատուկ խարդավանքների, «իր սիրելիին կրակոտ աչքերով ման գա» և որ ամենամահասկանալին է՝ իր չկայացած սիրո պատճառով գամվի անկողնուն և մահանա: Մի կողմ թողնելով Վարդիթերի հիվանդության և մահվան դրվագների ներկայացման նախաճանաչման քննադատությունը՝ ասենք, որ Նախաճանաչմանը, երբ անտրամբանական է համարում գլխավոր հերոսների տարիքը, նախորդ պաշտպանվելով հնարավոր քննադատությունից, մի քանի փաստերով հիմնավորում է իր վարկածը՝ այն դարձնելով գրեթե անխոցելի: Նա հատուկ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ հերոսներն ապրում են Արարատյան գավառում, և նրանք կենսաբանորեն պատրաստ չէին այդ սիրուն: Սրանից բացի հատկանշական է այն փաստը, որ տարածաշրջանին բնորոշ չէին մարդկանց ամուսնություններն այդ տարիքում, հիշյալ փաստը վկայում է Վարդիթերի մայրը՝ խոսելով իր ամուսնու հետ այն մասին, որ հնում 20 տարեկան աղջիկն ու 25 տարեկան տղան չէին էլ մտածում ամուսնության մասին: Նախաճանաչմանը չի շրջանցում այն հանգամանքը, որ հնում պատահել են ամուսնության դեպքեր վաղ տարիքում, սակայն կա մի խոշոր փաստ, որի անտեսումը կերթի սխալ վերլուծության և ժամանակաշրջանի ոչ ճիշտ պատկերացման. այդ ամուսնությունները չեն եղել սիրո գոյության պայմաններում:

Այս և ուրիշ թերություններ ու բացթողումներ ներկայացնելով՝ Նախաճանաչման անգնահատելի ծառայություն մատուցեց հայ գրականությանը, ճանապարհի հարթեց գրաքննադատության համար՝ դառնալով դրա մեծագույն երախտավորը: Սակայն

կա մի շատ կարևոր հանգամանք ևս. արդարությունը պահանջում է քննադատաբար մոտենալ նաև Նախաճանաչման, ում աշխատությունը և չի հավակնում գերծ մնալ որոշ թերություններից և բացթողումներից: Սկսենք այնտեղից, որ Նախաճանաչմանը մեղադրում է վեպի հեղինակին ժողովրդի սնուսիապաշտ ծեսերը պատկերելու համար՝ դրանք համարելով վտանգավոր հենց ժողովրդի համար: Գիշտ է, ազատախոհ Նախաճանաչմանը ցանկանում էր, որ գրականությունը մարդկանց մեջ խթաներ լուսավորության տարածումը, բայց նա հաշվի չի առել, որ Պռոշյանը, ով նպատակ ուներ Սոսի և Վարդիթերի սիրո միջոցով պատկերելու իր հարազատ ժողովրդի կենցաղը, պարտավոր չէր իր առջև խնդիր ունենալ գեղարվեստական գրականության միջոցով լուսավորություն տարածելու և դրան չնպաստող, բայց հարազատ ժողովրդի կենցաղը պատկերող դրվագները վեպից դուրս թողնելու: Մյուս թերությունն էլ այն է, որ Նախաճանաչմանը, շեղվելով իր բուն աշխատանքից, սկսում է խոսել ֆիզիկական զանազան երևույթներից, տալիս մի շարք գիտնականների անուններ, մեջբերումներ կատարում «Աստվածաշնչից»: Գիշտ է, այստեղ երևում են Նախաճանաչմանի բազմակողմանի զարգացածությունն ու գիտելիքների բարձր մակարդակը, բայց նմանատիպ նյութերը գրեթե կապ չունեն գրականագիտության հետ, իսկ դրանց առկայության դեպքում նյութը խճողվում է: Կա նաև մի ուրիշ հանգամանք, որը, կարծես, քիչ ուշադրության է արժանացել ուսումնասիրողների կողմից. համակողմանի և ներդաշնակ վերլուծության դեպքում հարց է առաջանում, թե կարո՞ղ էր արդյոք Նոր Նախիջևանում ծնված, աշխարհի մեծ քաղաքներում բնակված Նախաճանաչմանը գյուղի և այդտեղ բնակվող մարդկանց կենցաղի մասին գյուղում ծնված և ամբողջ կյանքում գյուղական միջավայրին հարազատ մնացած Պռոշյանի կատարած նկարագրությունները ենթարկել ճշգրիտ վերլուծության և քննադատության: Նախաճանաչմանին, իհարկե, ծանոթ էր գյուղացու կյանքը և հանապազօրյա աշխատանքը (հիշենք միայն «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»-ը), սակայն գյուղական ծեսերն ու սովորույթները, առօրյա կյանքն ու կենցաղը Պռոշյանին շատ ավելի հոգեհարազատ և քաջածանոթ էին: Համեմատության համար նշենք միայն, որ ժամանակին թունամայանը միանգամից նկատել է, որ մեծ քաղաքներում ապրած Ռ. Պատկանյանը լավ չի ճանաչում հայ գյուղը, դրա համար վերջինիս կենցաղին նվիրված պատկանյանական պոեզիան ճշմարտությունն արտացոլելու տեսակետից անկատար է և թերի: Տարակարծությունների տեղիք տվող մյուս հանգամանքն էլ այն է, որ իր աշխատության սկզբում Նախաճանաչմանը արվեստի տեսակետից գերազնահատում է Գ. Տեր-Յովհաննիսյանի անավարտ երկը, մեծ արվեստ տեսնում հայատառ թուրքերենով գրված «Ազապի» վեպում, որը, սակայն, ըստ գրականագետների, բավականաչափ անվարժ է գրված: Սա, իհարկե, պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ազապին» ունի իրատեսական մի շարք գլուխներ, որոնց մեծ ջատագովն էր Նախաճանաչմանը: «Գիշտ լինելով տեսության և Պռոշյանի վեպի գնահատության մեջ,- գրում է ակադեմիկոս Հրանտ Թամրազյանը,- Նախաճանաչմանը նկատելի չափով ընկնում է չափազանցության մեջ»<sup>2</sup>: Վերոհիշյալ տողերը ևս ապացուցում են, որ Նախաճանաչման քննադատաբար մոտենալը գիտության թելադրանքն է և անհրաժեշտ է օբյեկտիվ վերլուծության համար:

Արդարության դեմ մեղանշած կլինենք, եթե ըստ արժանավայն չգնահատենք Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը: Չնայած հիշատակված բազմաթիվ թերությունների՝ վեպը հայ գրականության խոշոր նվաճումն էր, հայտնի է, որ այն գրվել է մի մեծ և անզուսպ ոգևորությամբ, հայրենասիրական կրակով բռնկված վեպ գրելու պռոշյանական տենչն իրոք հաջողությամբ է պսակվել, Պռոշյանն ինքն էլ խոստովանել է, որ իր վեպը գրել է Խ. Արժվանի «Վերջ Յայաստանի» վեպի ազդեցության տակ՝ ըստ երևույթին, ունենալով մեկ միտում՝ շարունակել արժանական դպրոցի լավագույն ավանդույթները, սակայն այստեղ երևան է գալիս բացասական ևս մեկ

<sup>1</sup> Նախաճանաչման Մ., Երկեր, Երևան, 1985, էջ 529:

<sup>2</sup> Թամրազյան Հ., Հայ քննադատություն, Երևան, Գիրք Գ, 1992, էջ 226:

երևույթ. ընթերցողն անզեն աչքով էլ կարող է տեսնել ակնհայտ նմանություն երկու գործերի միջև, քանի որ Պռոշյանի վեպը կարծես «Վերք Հայաստանի» վեպի տարբերակը լինի (հատկապես սկզբում), համապատասխան մեկնաբանությունների փոխարեն ասենք միայն, որ Աբովյանի վեպն իր տեսակի մեջ անգերազանցելի է: «Սոս և Վարդիթեր» վեպում հեղինակը խոսում է ազգային-ժողովրդական ծեսերի և սովորույթների, հասարակական երևույթների մասին, որոնք շատ հաջողված դրվագների տեսքով են մուտք գործել վեպ, Պռոշյանի վեպում կյանքը հասարակաց է, իր հայրենի եզերքին հարազատ մնացած հեղինակը կենդանի և վառ գույներով է ներկայացրել հարազատ ժողովրդի կենցաղը: Ահա այստեղ է, որ վեպի հեղինակը պետք է ներկայացներ նոր սերնդի սոցիալական բողոքը՝ սկեպտիկյան ուղղությունը: Խոսելով կենարար սկեպտիցիզմի մասին՝ պետք է ասել, որ վեպի հերոսները, ցավոք սրտի, չեն արտահայտում իրենց սոցիալական բողոքը, չեն պայքարում սոցիալական անարդարության դեմ, ինչի մասին խոսվում է մեկ-երկու նախադասությամբ, բայց հարցին լուծում չի տրվում:

Վեպին ուրույն հմայք են տալիս այնտեղ ներառված չափածո դրվագները, որոնց կարևորությունն այն է, որ վեպի հեղինակը, հետևելով Խորենացու, Աբովյանի օրինակին, գրականություն է մտցրել հայ ժողովրդի բանահյուսությունը՝ այն փրկելով անհետացումից և մոռացումից: Բերենք մի գեղեցիկ օրինակ ջանգյուլումի ժամանակ ասվող տողերից.

« Ամպել ա ձուն չի գալիս – մթնել ա տուն չի գալիս.  
Էս անտեր բարձի վրա - առանց յար բուն չի գալիս:  
Ոչխարն արել եմ բակը - դեմ տվել սելի ակը.  
Ով իմ սիրածս առնի – չի վելի (վայելի) գլխի թագը:  
Կաքավը կաննել ա քարին – կտուցը լիքը արին.  
Մի աղլուխ վարդ եմ քաղել – դրկել եմ ախպոր յարին»:

Կամ Սոսի արտաբերած տողերը.

«Աղջի, ինչ լավ մագ ունիս – սոխակի փարվազ ունիս.  
Խոսքիս ջուղաբ չես տալիս – ինչ շատ էշի ու մագ ունիս:  
Մագերդ օլորվել ա - աչքերդ բոլորվել ա.  
Իրեք օր ա չեմ տեսել – իմ սիրտս մոլորվել ա:  
Ամպել ես ամպի տակին – ծունկդ ծնկանս տակին,  
Ես քեզ ինչ տեղ սիրեցի – խնձորի ծառի տակին»:

Այստեղ անհրաժեշտ է հիշել այն փաստը, որ գրականության պատմությունը միայն մեծերի և հանճարների մենաշնորհը չէ, նրանում իրենց արժանի տեղն են զբաղեցնում նաև տաղանդավոր և շնորհալի գրողները, ովքեր ևս մասնակցում են գրական ընդհանուր դաշտի ստեղծմանը, ինչ-որ չափով նաև տեղ հարթում հանճարների համար, իսկ գեղեցիկն ու հանճարեղը, ինչպես ընդունված է ասել, ընկալելի են համեմատության մեջ: Բարեբախտաբար, «Սոս և Վարդիթեր» վեպի արժանիքները բավական բարձր գնահատանքի են արժանացել հենց Նալբանդյանի կողմից: Իր աշխատության մեջ նա մեկ անգամ չէ, որ բացառիկ դրվատանքով է խոսում վեպի արժանիքների և դրա հեղինակի ընդունակությունների մասին: Ցավոք սրտի, Պռոշյանին չի հաջողվել կարգավ աշխատությունն ամբողջությամբ, որովհետև այն գրվել է բանտում և լույս տեսել գրվելուց բավական ուշ, սակայն Պռոշյանի արխիվում պահպանվել է մի գրություն, որտեղ ինքն ասում է, թե քննադատականի ինչ-որ մաս կարդացել է, սակայն չի հաջողվել գտնել ամբողջ աշխատությունը, որի համար դիմել է Նալբանդյանի ազգականներին և ծանոթներին, բայց ձեռնունայն է վերադարձել՝ հավելելով. «Այսքանի համար էլ գոհ եմ, թե շատ տեղում համաձայն չեմ մեր նշանավոր հրապարակախոս-կրիտիկոսի հետ» (տես Բաբայան Ա., «Պերճ Պռոշյան»): Հատկանշական մի երևույթ կարելի է նկատել Պռոշյանի ստեղծագործությունների մեջ. հիշատակված թերություններն ու բացթողումները բավական

մեղմված են նրա՝ «Սոս և Վարդիթեր» վեպից հետո գրված ստեղծագործություններում: Գրական փորձ ձեռք բերելուց զատ, այստեղ, ամենայն հավանականությամբ, իր ուղղիչ և ուսուցողական դերն է կատարել նաև Նալբանդյանի քննադատականի այն մասը, որին ծանոթ է եղել Պռոշյանը: Հարկ է նշել, որ Նալբանդյանի հեղինակած քննադատական աշխատությունը նպատակ չի հետապնդել նսեմացնելու վեպի շատ արժանիքները, այլ միայն գրական ճաշակ թելադրելու և նույնիսկ ասպագայում ստեղծվելիք ցանկացած ստեղծագործության հեղինակին «պարտադրելու» զգուշավոր և նրբանկատ վերաբերմունք ցույց տալ իր իսկ հեղինակած երկին: Այսօր էլ Նալբանդյանի «Կրիտիկա. Սոս և Վարդիթեր» աշխատությունը շարունակում է պահպանել իր բացառիկ դերն ու նշանակությունը:

Айк Оганнисян

#### АНАЛИТИЧЕСКИЙ ВЗГЛЯД НА СТОРОНУ РАБОТЫ МИКАЭЛА НАЛБАНДЯНА "КРИТИКА. СОС И ВАРДИТЕР"

В работе делается попытка представить современный анализ "Критики. Соса и Вардистер" М. Налбандяна, также говорится об истории армянской критики, вспоминается о критических мыслях разных времен. Для комплексного и гармоничного анализа, мы исследовали и рассматривали вопрос с разных точек зрения. Чтобы материал был более понятным, ставились параллели между разными авторами, и работам были даны соответственные оценки по их роли в литературе.

Hayk Hovhannisyan

#### ANALYTIC APPROACH TOWARDS MICHAEL NALBANDYAN'S WORK "CRITICISM: SOS AND VARDITER"

In the work it is made an attempt to present a new analysis of Nalbandyan's "Criticism: Sos and Varditer". There is also spoken about the history of Armenian criticism and critical thoughts of different times. In order to make a multi-dimensional and harmonious analysis authors have studied and considered different viewpoints, drew parallels between different authors and gave appropriate value to their work according to their importance in literature.